

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝
ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑ. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

<https://doi.org/10.59982/18294359-25.1-aa-11>

Ալիկ Խաչատրուրի Ազատյան

հայցորդ

ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն

alík.azatyan.1987@mail.ru

Ամփոփագիր

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ենթադրում է իրավական մեխանիզմների այնպիսի ճկուն համակարգ, որն ունակ կլինի կարգավորելու երեխայի՝ տարբեր տարիքային խմբերի առանձնահատկություններով պայմանավորված իրավահարաբերությունների շրջանակը:

Վերոգրյալը նշանակում է, որ խնդիրը, առաջին հերթին, պետք է դիտարկել երեխայի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ու կամքի ազատ արտահայտման սկզբունքի, ինչպես նաև դրանցով պայմանավորված հարաբերությունների համատեքստում, ինչին էլ ուղղված են սույն քննարկման շրջանակները:

Այս առումով, մասնավորապես, միջազգային պաշտպանություն «փնտրող» երեխաների համար զարգացվում են տարբեր իրավական կառուցակարգեր որոնք փորձում են երեխայի լավագույն շահի պաշտպանության համար գտնել օպտիմալ լուծումներ:

Երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝ ինչպես մարդու իրավունքներին նվիրված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի ընդհանուր համատեքստում այնպես էլ՝ երեխայի իրավունքների պաշտպանությանը նվիրված հատուկ իրավական փաստաթղթերի շրջանակներում, որոնց շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան:

Հոդվածի շրջանակներում քննության են առնվել երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված մի շարք որոշումներ, ինչպես նաև անդրադարձ է կատարվել ոլորտի հետ կապված ներպետական օրենսդրությանն ու առկա մեխանիզմներին և ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ծրագրերի շրջանակներում իրականացված բարեփոխումների:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Թեմայի շրջանակներում վեր են հանվել նաև երեխայի շահերին առնչվող որոշ հակասություններ՝ անդրադառնալով նաև գոյություն ունեցող օրենսդրական մի շարք բացերի:

Հիմնաբառեր: Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, «խնամատար ինստիտուտ», «սոցիալական որբություն», որդեգրում, «նվազագույն տարիք»:

Ներածություն

Երեխայի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը հանդիսանում են պետաիրավական կարևորագույն հիմնահարցերից մեկը: Նրանց իրավունքների պաշտպանությունը մշտապես գտնվում է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

Երեխաները բոլոր ժամանակներում ու հասարակարգերում մշտապես եղել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը, և կախված այն հանգամանքից, թե որքանով են պաշտպանված երեխայի իրավունքները՝ կախված է նաև մեր հասարակության ապագան:

Ինչպես և ցանկացած քաղաքակիրթ պետություն, որն առաջնահերթ գործառույթներից է համարում հասարակության անչափահաս անդամների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ), ևս, կազմելով միջազգային հանրության անբաժան մասը, մշտապես հոգատարություն է դրսևորում իր ապագա քաղաքացիների՝ բարոյապես և ֆիզիկապես ճիշտ զարգացման ու դաստիարակության հանդեպ, որի շրջանակներում իրականացվել և շարունակվում են իրականացվել մի շարք՝ ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրեր:

Հետազոտության նպատակն է՝

Հետազոտության օբյեկտն է՝ երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից կայացված որոշումների ու ձեռքբերումների ուսումնասիրությունը, **առարկան՝** երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ կողմից իրականացված ռազմավարական ծրագրերի քննարկումն ու, այդ ուղղությամբ, որոշ չկարգավորված հիմնախնդիրների ու հակասությունների վերհանումը:

Հետազոտությունում կիրառվել են տեսամեթոդական, համեմատաիրավական մեթոդները: Հետազոտությունում կիրառվել է նաև դեդուկտիվ եզրահանգման մեթոդը՝ ընդհանուրից մասնավոր դիտարկմամբ՝ բացահայտելու համար երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության հնարավոր լուծումներն ու դրանց արդյունավետությունը:

ՄԻԵԴ-ի որոշումները՝ որպես երեխայի իրավունքների պաշտպանության դատաիրավական միջոց: ՄԻԵԴ-ը՝ ի թիվս այլ միջազգային կառույցների, մշտապես հանդես է եկել երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ մի շարք

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

դիրքորոշումներով, որոնք, հետագայում, դարձել են նախադեպային՝ ներպետական մակարդակով համանման գործերի հետագա քննության ընթացքում:

Մասնավորապես, քննության առնելով երեխայի իրավունքների խախտման հարցը՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է պետության կողմից հանցագործության արդյունավետ նախաքննության անհրաժեշտությունը, ինչպես նաև հստակորեն արձանագրել, որ պետությունը կրում է պարտավորություն՝ ապահովելու արդյունավետ քրեական նախաքննություն՝ այն գործերով, որոնք Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (առավել հայտնի որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա/այսուհետ՝ ՄԻԵԿ) ներառում են երեխայի դեմ ուղղված բռնության դեպքերը [ՄԻԵԿ, հոդ. 3 և 8]:

Շարունակելով զարգացնել մի շարք խնդրահարույց հարցերի շուրջ իր դիրքորոշումները՝ ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև հանցագործության զոհ դարձած երեխաների հետագա վերականգնման խնդրին՝ իր վճռում մատնանշելով, պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները՝ պաշտպանելու երեխաներին բռնությունից՝ ներառյալ, օգնելու վերականգնվել և ապահովել հանցագործության զոհ դարձած երեխաների սոցիալական ինտեգրացիան:

ՄԻԵԴ-ը, հատկապես, շեշտադրել է այն փաստը, որ պետությունները պարտավորվում են հոգ տանել բռնության զոհ դարձած երեխաների հետվերականգնողական գործընթացի նկատմամբ՝ ապահովելով նրանց հոգեբանական և այլ անհրաժեշտ ծառայությունների մատուցմամբ՝ ինչպես գործի ողջ քննության ընթացքում, այնպես էլ՝ դրանից հետո:

ՄԻԵԴ-ի կողմից հատուկ ուշադրություն են դարձվել նաև պետության պոզիտիվ պարտավորություններին՝ հորիզոնական իրավահարաբերություններում, այսինքն՝ քաղաքացի-մասնավոր հատված տիրույթում, որոնք բացառություն են կազմում ՄԻԵԿ-ի գործողության ընդհանուր կանոնից:

Ինչպես գիտենք, ՄԻԵԿ-ի ընդհանուր կանոնները տարածվում են, բացառապես, ուղղահայաց հարաբերություններում՝ շեշտադրում կատարելով քաղաքացի-պետություն հարաբերության վրա, որտեղ պետությունը պաշտպանում է անձին՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից հնարավոր իրավախախտումներից:

ՄԻԵԴ-ը, սակայն, հաշվի առնելով ՄԻԵԿ-ով նախատեսված որոշ հոդվածների հիմնարար նշանակությունը, օրինակ՝ մարդու կյանքի իրավունքը, արժանապատվությունն ու ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիությունը, նախադեպային իրավունքի միջոցով զարգացրել է պետության պոզիտիվ պարտավորությունների ինստիտուտը՝ նաև հորիզոնական իրավահարաբերություններում՝ շեշտը դնելով քաղաքացի-մասնավոր հատված հարաբերության վրա [Legislative History of the Convention, 22]:

Այս պարտավորությունների շրջանակներում՝ ըստ ՄԻԵԿ-ի դիրքորոշման, պետությունը պարտավորվում է իրականացնել արդյունավետ քրեական դատավարություն՝ ապահովելով համապատասխան պետական մարմինների

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

առկայությունն այդ գործընթացին, ինչպես նաև, հնարավորինս, կանխել իրավախախտումների դեպքերը:

ՄԻԵԴ-ը պետության նման պարտավորությունները, հորիզոնական իրավահարաբերություններում, զարգացրել է՝ մասնավորապես, ՄԻԵԿ-ի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 8-րդ հոդվածների առնչությամբ՝ Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի վճռով, որտեղ ՄԻԵԴ-ը ճանաչել է ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի խախտում՝ այն պատճառաբանությամբ, որ պետությունը չի պաշտպանել սպանված երեխաների կյանքը (ՄԻԵԴ-ը նշել է, որ պետական իշխանությունները կրում են պարտավորություն՝ ձեռնարկելու օպերատիվ միջոցառումներ՝ պաշտպանելու համար անձին, որի կյանքը վտանգված է մեկ այլ անձի կողմից), ինչպես նաև չի ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ դրանց կանխարգելման ուղղությամբ, որի արդյունքում երեխայի համար առաջացել են անբարենպաստ հետևանքներ [Kontrova v. Slovakia]:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում առանձին խումբ են կազմում այն գործերը, երբ երեխայի իրավունքները խախտվում են՝ անմիջականորեն պետական համակարգի աշխատակիցների՝ առավելապես, քննիչների կողմից՝ հարցաքննության ընթացքում:

Օրինակ՝ Դառուաշն ընդդեմ Ֆրանսիայի, Ստոիցան ընդդեմ Ռումինիայի, Օկկալին ընդդեմ Թուրքիայի և այլ գործերը, որոնց առնչությամբ ՄԻԵԴ-ը հանդես է եկել երեխաների իրավունքների հարգման և հարցաքննության իրավաչափ մեթոդների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ դիրքորոշմամբ [Darraj v. France], [Stoica v. Romania], [Okkali v. Turkey]:

ՄԻԵԴ-ն անդրադարձել է պետական ծառայողի կողմից անազատության մեջ գտնվող երեխաների սեռական բռնության դեպքերին՝ որակելով այն որպես ծանր հանցագործություն՝ նախատեսելով խստագույն պատիժ նման հանցարարքի համար (օրինակ, Այդինն ընդդեմ Թուրքիայի գործով ազատազրկված երեխայի բռնաբարության դեպքը) [Aydin v. Turkey]:

ՄԻԵԴ-ն ընդունել է նաև մի շարք վճիռներ, որոնք վերաբերում են ազատազրկման վայրերում գտնվող անչափահաս հանցագործների՝ կեցության պայմանների և համապատասխան բժշկական օգնության ապահովման հետ կապված իրավունքների պաշտպանությանը:

Նման գործերը քննության են առնվել, մասնավորապես, ՄԻԵԿ-ի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների շրջանակներում, որտեղ ՄԻԵԴ-ի կողմից դրանք ճանաչվել են իբրև պետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտման դեպքեր՝ նշված հոդվածներով նախատեսված պայմանների բացակայության պատճառով:

Այսպես, օրինակ, Բլոխինն ընդդեմ Ռուսաստանի վճռով ՄԻԵԴ-ը ճանաչել է ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում՝ ազատազրկման վայրում անչափահաս հանցագործին բժշկական խնամք չտրամադրելու պատճառով [Blokhin v. Russia]:

Այս գործով ՄԻԵԴ-ը հաստատել է, որ ազատազրկման վայրի վարչակազմը, տեղյակ լինելով ազատազրկվածի առողջական խնդիրների մասին, միևնույն է, չի

տրամադրել բժշկական աջակցություն՝ նույնիսկ այն դեպքում, երբ ազատագրկվածը բազմիցս այն պահանջել է:

Նույն գործով դատարանը գտել է, որ անչափահասը, գտնվելով անչափահասների ազատագրկման կենտրոնում 30 օր, չի ունեցել իր իրավունքների պաշտպանության հնարավորություն, քանզի չի ունեցել ներկայացուցիչ՝ դատական քննության ընթացքում և տեղեկացված չի եղել իրավաբանի, ինչպես նաև մանկավարժի աջակցությունից օգտվելու իր իրավունքների մասին:

Այն պատճառաբանությունը, որ ներպետական օրենսդրությունը չի նախատեսում քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքից նվազ տարիք ունեցող անչափահասի հարցաքննության ժամանակ իրավաբանական օգնության իրավունք, չի համարվել բավարար հիմք՝ նման պարտավորության չկատարման համար:

Ընդհակառակը, վերջինս նպատակ ունի՝ անկախ ներպետական օրենսդրությունում նման դրույթի առկայությունից, իրավախախտման դեպքում, իրավաբանական և այլ օգնության տեսքով անչափահասներին ապահովել գործող բոլոր հիմնարար միջազգային իրավանորմերով:

Առաջնորդվելով նշված փաստերով՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է նաև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի դրույթների խախտում՝ այն է՝ անչափահասի ոչ համակողմանի հարցաքննություն՝ պայմանավորված հանցագործության զոհի (նա ևս անչափահաս է եղել՝ 9 տարեկան) և վերջինիս մոր՝ որպես վկաներ ներկայացված չլինելու հանգամանքով:

ՄԻԵԴ-ը վճիռներ է ընդունել նաև անչափահաս հանցագործների մարմնական պատիժների արգելքի մասին:

Նման պատիժները դատարանի կողմից որակվել են ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի շրջանակներում, որոնք, առավելապես, ընդունվել են Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, որտեղ երեխայի նկատմամբ դրսևորված վերաբերմունքը որակվել է՝ որպես խոշտանգում, ինչպես նաև անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող արարք [Tyrer v. the United Kingdom]:

Երեխայի իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները ՀՀ-ում: Երեխայի իրավունքների երաշխիք ասելով՝ հասկանում ենք բոլոր այն իրավական միջոցները, որոնք ապահովում են երեխայի այս կամ այն իրավունքի իրացումը:

Այս առումով, պետք է նշել, որ մեծ նշանակություն ունի նաև երեխայի իրավունքների ներպետական համակարգը, որի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ օրենսդրությունը:

Ազգային օրենսդրությունը սահմանում է այն բոլոր հիմնարար սկզբունքներն ու նպատակները, որոնք անհրաժեշտ են երեխայի իրավունքների պաշտպան կատարման համար՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային իրավանորմերի պահանջներին, քանի որ ՀՀ Սահմանադրական իրավունքի հիմնական նպատակը մարդու (մեր դեպքում՝ երեխայի) իրավունքների ապահովումն ու յուրաքանչյուր անձի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

խախտված իրավունքների վերականգնումն է, հետևապես, մարդու և քաղաքացու իրավունքների տեսական և գործնական պաշտպանությունը, միայն, կարող է հանդիսանալ իրական երաշխիք՝ այդ իրավունքների և ազատությունների ապահովման համար:

Ինչ վերաբերում է երեխայի իրավունքների ընդհանուր պաշտպանվածությանը, նշենք, որ դրանք, ընդհանուր առմամբ, կարգավորվում են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, ըստ որի՝ երեխայի իրավունքների ապահովումը համարվում է պետության պարտականությունը, ինչպես նաև պետությունը կարգավորում է երեխայի պաշտպանության հետ կապված հասարակական հարաբերությունները (օրենքը երեխա է համարում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա, օրենքով սահմանված կարգով, գործունակություն է ձեռք բերում ավելի վաղ հասակում) [«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ. 1]:

Խոսելով երեխայի իրավունքների մասին՝ հարկ ենք համարում նշել նաև ընտանիքի ունեցած առանձնահատուկ դերակատարումը՝ երեխայի՝ որպես իրավունքի սուբյեկտի, կայացման և վերջինիս իրավունքների հաջորդական ու «հուսալի» իրացման հարցում՝ շեշտը դնելով նրանց լիարժեք դաստիարակության, ընդհանուր զարգացվածության և կրթության վրա:

ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է՝ հավելելով, որ վերջինս՝ որպես բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև՝ մայրությունը և մանկությունը, գտնվում են պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո [ՀՀ Սահմանադրություն, հոդ. 16]:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության մեջ նշված է նաև, որ «Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար [ՀՀ Սահմանադրություն, հոդ. 36]:

Ինչպես գիտենք, երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները [ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդ. 43]:

Այս առումով, պետք է նշել, որ, օրինակ, ՌԴ ընտանեկան օրենդրությունը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ տալիս է ավելի տարածական լուծում՝ սահմանելով, որ երեխայի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (նրանց փոխարինող անձինք), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ խնամակալության (հոգաբարձության) մարմինը, ինչպես նաև դատախազը և դատարանը, ինչը, միանգամայն, իրավացի ենք համարում, քանզի քիչ չեն դեպքերը, երբ իրավապահ մարմինները ստիպված են լինում պաշտպանել երեխաների իրավունքները՝ հենց անբարեխիղճ ու օրինազանց ծնողներից [Семейный кодекс РФ, ст. 56]:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ամբողջովին համամիտ լինելով օրենսդրական նման ձևակերպման հետ՝ առաջարկում ենք ՀՀ ընտանեկան օրենսգրքում, ևս, նախաձեռնել համանման փոփոխություն՝ 43-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպելով հետևյալ կերպ՝ «1. Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են ծնողները (օրինական ներկայացուցիչները), իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ դատարանը, դատախազությունը, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինը»:

Որպես երեխայի իրավունքների պաշտպանության երաշխիքներ՝ անհրաժեշտ ենք համարում առանձնացնել նաև որոշ ներպետական նախաձեռնություններ:

Այսպես, 2006 թվականից գործում են ՀՀ մարզպետարանների՝ ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, որոնց խնդիրներն են՝ մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության իրականացման ապահովումը, ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը, մարզում՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը, ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական նպատակային՝ այդ թվում, գենդերային ծրագրերի մշակումն ու դրանց կատարման ապահովումը, ինչպես նաև հակասոցիալական վարքագիծ դրսևորած իրավախախտ անչափահասների համար այլընտրանքային (վերականգնողական) արդարադատության ծրագրերի մշակումն ու իրականացումը:

2012 թվականին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի գործունեության հիմնական նպատակն է՝ երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովման միասնական պետական քաղաքականության իրականացումը, ինչպես նաև վերջինիս իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման մարմինների, հասարակական, քաղաքական գիտական և այլ կազմակերպությունների համագործակցության համակարգումը [ՀՀ վարչապետի թիվ 1295-Ն որոշում]:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագրերը, որոնցում ներառվել են երեխաների՝ այդ թվում, հաշմանդամություն ունեցող, իրավունքների պաշտպանության հետ կապված մի շարք դրույթներ՝ մասնավորապես, երեխայի իրավունքների պաշտպանության ինստիտուտների գործունեության արդյունավետության բարձրացման, վերջիններիս պաշտպանության հարցերով զբաղվող տեղական մարմինների իրավունքների ամրապնդման, բռնության զրի դարձած երեխաների համար վերականգնողական համակարգի զարգացման և այլ ուղղություններով [ՀՀ վարչապետի թիվ 1978-Լ որոշում]:

Ներպետական մակարդակով անդրադարձ է կատարվել նաև երեխայի առողջության պահպանման հետ կապված մի շարք խնդիրների լուծմանը, որի

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

շրջանակներում ՀՀ կառավարության կողմից, մասնավորապես, ընդունվել է «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» 2003 թվականի 1000-Ն որոշումը [ՀՀ կառավարության թիվ 1000-Ն որոշում]:

Երեխայի իրավունքների պաշտպանության շրջանակներում ՀՀ-ն ստորագրել և վավերացրել է նաև այնպիսի միջազգային փաստաթղթեր, ինչպիսիք են՝ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) երկու արձանագրությունը՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի» ու «Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության» (2005թ.) մասին, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության 182-րդ կոնվենցիան՝ երեխաների աշխատանքի մասին (2005թ.), Հաագայի կոնվենցիան՝ միջազգային որդեգրման մասին (2006թ.), Հաշմանդամների իրավունքների մասին կոնվենցիան (2007թ.) և փոփոխություններ է կատարել ՀՀ ընտանեկան, քրեական և աշխատանքային օրենսգրքերում՝ նպատակ ունենալով ապահովել երեխաների առավել արդյունավետ պաշտպանությունը՝ շահագործումից ու թրաֆիքինգից:

2004 թվականին ՀՀ-ն միացել է նաև 2003 թվականի մայիսի 21-ին Ժնև քաղաքում ստորագրված «Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ծխախոտի դեմ պայքարի շրջանակային կոնվենցիային», որը համարվում է առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ծխախոտի դեմ պայքարի վերջին ռազմավարական փաստաթուղթը, ինչը իրավամբ, համարվում է կարևոր ռազմավարական քայլ՝ հաշվի առնելով ծխախոտի ունեցած բացասական ազդեցությունը, հատկապես, երեխաների առողջության վրա [ՀՀ ԱԺ թիվ Ն-127-3 որոշում]:

ՀՀ-ն առանձնակի հոգաժողության առարկա է դարձրել նաև երեխայի որդեգրման կամ, այսպես ասած, «սոցիալական որբության խնդիրը»:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին [ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդ. 41]:

Այս առումով, երեխաների հոսքը դեպի մանկատուն նվազեցնելու համար ՀՀ կառավարությունը ներդրել է «Խնամատար ինստիտուտ», որը հնարավորություն է տալիս երեխաներին՝ ապրել ընտանիքում և ստանալ դաստիարակություն (խնամատար ընտանիքի մոդելը ՀՀ-ում, փորձնական, ներդրվել է 2008 թվականից, երբ 24 երեխա տեղավորվել էր 23 ընտանիքում) [ՀՀ կառավարության թիվ 459-Ն որոշում]:

Այս ինստիտուտը, իրականում, համարվում է խնդրի ժամանակավոր լուծում, որի շնորհիվ երեխաները հնարավորություն են ունենում ստանալ ծնողական խնամք՝ թեկուզև՝ ժամանակավոր:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է նաև ՀՀ խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպելու (բեռնաթափում) և երեխաների մուտքը հաստատություններ կանխարգելելու ծրագիրը, որի նպատակն է՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի խնամքի և դաստիարակության ապահովումն ընտանիքում, նշված հաստատություններից երեխաների վերադարձը՝ ընտանիք, ու երեխաների մուտքի կանխարգելումը՝ հաստատություններ, ինչպես նաև՝ երեխայի և նրա ընտանիքի սոցիալական վիճակի բարելավումը [ՀՀ կառավարության թիվ 743-Ն որոշում]:

Միջազգային հանրությունը, ևս, նախատեսել է միջազգային որդեգրման վերահսկողության պատշաճ ապահովման գործընթացներ:

Այսպես, ՄԱԿ-ի 1986 թվականի հոչակագրի 18-րդ հոդվածը սահմանում է, որ Կառավարությունն արտասահմանում որդեգրված երեխաների շահերի պաշտպանության համար պետք է ունենա համապատասխան քաղաքականություն և կատարի արդյունավետ վերահսկողություն, ինչին ՀՀ-ն անդրադարձել է օրենսդրական մակարդակով, մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի համաձայն՝ ՀՀ տարածքում ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրումն օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների կողմից, ինչպես նաև որդեգրումը վերացնելը, կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով [ՀՀ ընտանեկան օրենսգրք, հոդ. 150]:

Պետք է նշել նաև, որ 1993 թվականի մայիսի 29-ին ընդունվեց «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բանագլավառում համագործակցության մասին» Հաագայի կոնվենցիան (կից հայտարարություններով), որի նպատակն էր ստեղծել երաշխիքներ, որպեսզի օտարերկրյա որդեգրումն իրականացվի երեխայի լավագույն շահերից ելնելով և միջազգային իրավունքով ճանաչված նրա հիմնական իրավունքների պահպանմամբ, ինչպես նաև այմանավորվող պետությունների միջև ստեղծել համագործակցության համակարգ՝ այդպիսի երաշխիքների հարգանքն ապահովելու համար՝ դրա միջոցով կանխելով երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը՝ միաժամանակ, ապահովելով նշված կոնվենցիայի համաձայն՝ որդեգրման ճանաչումը՝ Պայմանավորվող պետություններում, որին ՀՀ-ն միացավ 2007 թվականի հունիսի 1-ին [ՀՀ ԱԺ թիվ Ն-304-3 որոշում]:

Չնայած երեխայի կյանքում որդեգրման ինստիտուտի նշանակությանը, որը կրում է մարդասիրական բնույթ, կարծում ենք, որ այն, միաժամանակ, կարող է կրել նաև վատ հետևանքներ՝ որդեգրվածին դարձնելով թրաֆիքինգի զոհ, ինչը, մեր օրերում, համարվում է միջազգային մակարդակի մեծագույն խնդիր:

Այս ուղղությամբ, մասնավորապես, Եվրոպայի Խորհրդի հատուկ հանձնաժողովի կողմից նախաձեռնվել է «Թրաֆիքինգի դեմ գործողությունների» ծրագիրը, որը կոչ է անում ստեղծել մարդու իրավունքների և զոհերի արժանապատվության պաշտպանության հզոր կառույց:

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արձագանքելով նմանատիպ կոչերին, կարծում ենք, որ տեղին կլինեն, պետական մակարդակով, նշված խնդրին ցուցաբերել ավելի աջալուրջ և հետևողական վերաբերմունք՝ որդեգրման գործընթացին ներգրավելով նաև իրավապահ մարմիններին՝ միաժամանակ, առանձնակի կարևորելով որդեգրողների անձնական որակները (սրտացավություն, բարություն, հոգատարություն, պատասխանատվության զգացում և այլն), ինչպես նաև խնամատար կենտրոնների կողմից սկզբնական ժամանակաշրջանում որդեգրվածի հետ պահպանել ամուր կապ՝ հաճախակի տեսակցության, տեսազանգի, հեռախոսազանգի և կապի այլ միջոցների տեսքով:

Հաճախակի հանդիպող երևույթ է նաև երեխաների թափառաշրջիկությունն ու մուրացկանությունը, որի կանխարգելմանն են ուղղված՝ ՀՀ Կառավարության «Մանկատան շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրման կարգը հաստատելու մասին» 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1452-Ն որոշումը, ՀՀ կառավարության «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները հաստատելու մասին» 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 551-Ն որոշումն ու այլ փաստաթղթեր:

Երեխաների սոցիալական պաշտպանության ուղղությամբ պետք է նշել նաև, որ 2002 թվականից գործում է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:

Երեխայի իրավունքների ներպետական մեխանիզմը ենթադրում է նաև կրթական համակարգի բարելավում, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

ՀՀ-ն, կարևորելով կրթության իրավունքի դերը մարդու՝ մասնավորապես, երեխայի կյանքում, օրենսդրական մակարդակով ամրագրել է դրա իրացման մեխանիզմները:

Կրթության հետ կապված դրույթներն իրենց ամրագրումն են ստացել Սահմանադրության մեջ, ՀՀ այլ օրենքներում («Կրթության մասին» օրենք, «Նախադպրոցական կրթության մասին» օրենք, «Երեխայի իրավունքների մասին» օրենք), ինչպես նաև տարբեր ենթաօրենսդրական ակտերում ու ներառական կրթական ծրագրերում: Օրինակ, ՀՀ Սահմանադրությունը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Այդ է վկայում նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը՝ համաձայն որի՝ յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու իրավունք՝ իր, ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ ուսումնական հաստատություն ընտրելու իրավունք [ՀՀ Սահմանադրություն, հոդ. 38], [«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ. 12]:

Առաջնահերթ ենք համարում նաև երեխայի աշխատանքային իրավահարաբերության հետ կապված որոշ դրույթների քննարկումը:

Այսպես, Կոնվենցիան սահմանում է՝ մասնակից պետություններն ընդունում են տնտեսական շահագործումից և այնպիսի աշխատանք կատարելուց

պաշտպանվածության երեխայի իրավունքը, որը կարող է վտանգավոր լինել նրա առողջության համար կամ խոչընդոտել կրթություն ստանալուն կամ վնասել նրա առողջությունը և ֆիզիկական, մտավոր, բարոյական ու սոցիալական զարգացումը [Կոնվենցիա, հոդ. 32]:

Այս առումով, հարկ ենք համարում երեխաներին աշխատանքային շահագործումից պաշտպանելու ուղղությամբ պետական ակտիվ քաղաքականության դրսևորումը, որտեղ, աշխատանքի ընտրության հարցում, վերջիններիս իրավունքի իրացման նկատառումներից ելնելով, անկյունաքարային նշանակություն կունենա երեխայի մտավոր և ֆիզիկական համապատասխանությունը՝ ներկայացվող աշխատատեսակին՝ որպես կայուն իրավական երաշխիք:

Ուշադրության է արժանի նաև երեխայի տարիքային առանձնահատկությամբ պայմանավորված հետևյալ ուսումնասիրության շրջանակը:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքն ամրագրում է, որ երեխայի հայացքները, համոզմունքներն ու կարծիքը ենթակա են՝ նրա տարիքին ու հասունությանը համապատասխան, պատշաճ ուշադրության, ընդ որում, օրենքը, ինչպես տեսնում ենք, սույն իրավահարաբերության շրջանակներում որևէ տարիքային խումբ չի առանձնացնում [«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ. 10]:

Մինչդեռ, ՀՀ ընտանեկան օրենսգիրքը կարգավորում է միայն 10 տարին լրացած երեխայի անվան կամ ազգանվան փոփոխության հետ կապված հարաբերությունները, ինչը, գտնում ենք՝ այնքան էլ արդարացված չէ՝ հետևյալ պատճառներով [ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդ. 46]:

Նախ, նման տարիքային շեմի սահմանումը հակասության մեջ է մտնում ՄԻԵԿ-ի դրույթների հետ, որտեղ երեխայի կամքի ազատ արտահայտման իրավունքի մասով, տարիքային սահմանափակումներ առկա չեն, երկրորդ՝ կարծում ենք, որ սեփական հայացքների ազատ արտահայտման իրավունքի վերապահումը պետք է կրի անհատական բնույթ և պայմանավորված լինի ոչ թե երեխայի կոնկրետ տարիքով, այլ վերջինիս մտավոր զարգացման ունակություններով ու գիտակցական առանձնահատկություններով [ՄԻԵԿ, հոդ. 12]:

Ուստի, ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ընտանեկան օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն՝ վերացնելով նշված տարիքային շեմը՝ շեշտադրումը կատարելով երեխայի մտավոր ունակությունների վրա և հոդվածի վերոհիշյալ մասը ձևակերպել հետևյալ կերպ՝ «Երեխայի անվան կամ ազգանվան փոփոխությունը կարող է կատարվել երեխայի համաձայնությամբ»:

Երեխայի աշխատանքի բնույթով պայմանավորված՝ ՀՀ-ում կարևոր ենք համարում նաև «նվազագույն տարիքի» ինստիտուտի ուսումնասիրման հարցը:

Աշխատանքի միջազգային կազմակերպության «Նվազագույն տարիքի մասին» N 138 Կոնվենցիան նշում է, որ մասնակից պետությունների կողմից սահմանվող աշխատանքի ընդունման նվազագույն տարիքը չի կարող ցածր լինել դպրոցական պարտադիր ուսումն ավարտելու տարիքից և չպետք է ցածր լինի տասնհինգից, ինչի

կապակցությամբ գտնում ենք, որ ներպետական մակարդակով, ևս, անհրաժեշտ է կիրառել աշխատանքի բնույթով և տարիքային սահմանափակմամբ պայմանավորված նմանատիպ դրույթ, որը, անշուշտ կհստակեցնեք նշված իրավահարաբերության շուրջ պետական միատեսակ քաղաքականության կիրառման խնդիրը՝ ապահովելով երեխայի աշխատանքային իրավունքների պաշտպանության առավել կայուն և զարգացած համակարգ:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ ՀՀ-ն, ևս, միացել է սույն կոնվենցիային՝ կարծում ենք՝ ոլորտում ներպետական հետևողական քաղականության մշակումն ու արդյունավետ վերահսկողության իրականացումը կնպաստեն երեխայի սահմանադրաիրավական երաշխիքների հետագա ամրապնդմանը [ՀՀ ԱԺ թիվ Ն-211-3 որոշում]:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ներպետական մակարդակով, թեև, կան որոշ ձեռքբերումներ, սակայն, առկա օրենսդրական մի շարք բացեր վերանայման և հստակեցման կարիք ունեն, քանի որ պետության՝ մինչ այժմ գործադրած ջանքերը, դեռևս, բավարար չեն երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում առաջացած խնդիրների լուծման համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ներպետական մակարդակով նախաձեռնել երեխայի բռնության կանխարգելման վերաբերյալ հայեցակարգ՝ մշակելով երեխային բռնությունից ապահովելու համապատասխան ռազմավարություն, ինչպես նաև կազմակերպել՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրված հայ երեխաների նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացում՝ ելնելով նրանց անվտանգության ապահովման նկատառումներից:

Այս առումով, հատկապես, կարևոր ենք համարում երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնող մարմինների թվում դատարանի ու իրավապահ մարմինների ներգրավումը, որոնք որդեգրման գործընթացի իրականացման պատշաճ վերահսկման նկատառումներից ելնելով՝ էական դերակատարում կարող են ունենալ:

Անհրաժեշտ է նաև երեխաների համար, ենթաօրենսդրական մակարդակով, սահմանել իր տեսակով և ներկայացվող նվազագույն տարիքային շեմով պայմանավորված աշխատատեսակների ցանկ՝ շեշտը դնելով տվյալ աշխատատեսակի առանձնահատկությանը երեխայի մտավոր և ֆիզիկական համապատասխանության վրա, որը, կստեղծի կայուն իրավական երաշխիք՝ երեխաներին աշխատանքային շահագործումից պաշտպանելու հարցում:

Միաժամանակ, առաջարկում ենք վերացնել՝ միայն 10 տարեկան երեխային անվան կամ ազգանվան փոփոխության իրավասություն վերապահելու՝ ոչնչով չհիմնավորված տարիքային խտրականությունը՝ հաշվի առնելով, որ այն էականորեն

հակասում է երեխայի կամքի ազատ արտահայտման՝ միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին:

Փրականության ցանկ

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, ընդունվել է 04.11.1950:
2. «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, ընդունվել է 20.11.1989:
3. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է 05.06.1995:
4. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, ընդունվել է 09.11.2004:
5. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 29.05. 1996 :
6. ՀՀ ԱԺ թիվ Ն-127-3 որոշում, ընդունվել է 12.10.04:
7. ՀՀ ԱԺ թիվ Ն-211-3 որոշում, ընդունվել է 03.10.05:
8. ՀՀ ԱԺ թիվ Ն-304-3 որոշում ընդունվել է 23.10.06:
9. ՀՀ կառավարության թիվ 1000-Ն որոշում, ընդունվել է 08.23.03:
10. ՀՀ կառավարության թիվ 459-Ն որոշում, ընդունվել է 08.05.08:
11. ՀՀ կառավարության թիվ 743-Ն որոշում, ընդունվել է 17.07.14:
12. ՀՀ վարչապետի թիվ 1295-Ն որոշում, ընդունվել է 28.10.12:
13. ՀՀ վարչապետի թիվ 1978-Լ որոշում, ընդունվել է 26.12.19:
14. Legislative History of the Convention on the rights of the child (1978-1989). United National Centre for Human Rights. New York. United Nations. 1995, 22 p.
15. Kontrova v. Slovakia (Application no. 7510/04), 31.05.2007.
16. Darraj v. France (Application no. 34588/07), 04.11.2010.
17. Stoica v. Romania (Application no. 42722/02), 04.03.2008.
18. Okkali v. Turkey (Application no. 52067/99), 17.10.2006.
19. Aydin v. Turkey, no. 23178/94, 25.09.1997.
20. Blokhin v. Russia - 47152/06, 23.3.2016..
21. Tyrer v. the United Kingdom (Application no. 5856/72), 25 April 1978
22. Семейный кодекс РФ, принятие 08.12.1995.

**DECISIONS OF THE EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS AS A JUDICIAL AND
LEGAL MEANS OF PROTECTING THE RIGHTS OF THE CHILD AND
CONSTITUTIONAL AND LEGAL GUARANTEES FOR THE PROTECTION OF THE
RIGHTS OF THE CHILD IN THE REPUBLIC OF ARMENIA**

Alik Azatyan

Researcher

EUA, Chair of Law

alick.azatyan.1987@mail.ru

Abstract

The protection of the rights and legitimate interests of the child presupposes such a flexible system of legal mechanisms that will be able to regulate the sphere of legal relations determined by the characteristics of the child in different age groups.: The above means that the problem, first of all, should be considered in the context of the psychophysiological characteristics of the child and the principle of free expression of will, as well as the relationships caused by them, which is what the framework of this discussion is aimed at. In this regard, in particular, for children "seeking" international protection, various legal mechanisms are being developed that try to find optimal solutions for the best protection of the interests of the child. The protection of the rights of the child is carried out both in the general context of a number of international legal instruments on human rights, and within the framework of special legal instruments on the protection of the rights of the child, among which the Convention on the Rights of the Child occupies a special place. The article reviewed a number of decisions adopted by the European Court of Human Rights concerning the protection of the rights of the child, and also touched upon domestic legislation and existing mechanisms related to this area, as well as reforms carried out within the framework of a number of programs of strategic importance. The topic also identified some contradictions related to the interests of the child, as well as touched upon a number of existing legislative gaps.

Keywords: European Court of Human Rights, European Convention on Human Rights, "foster care", "social orphanhood", adoption, minimum age.

Ներկայացվել է՝ 01.04.2025թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 29.04.2025թ.